



Ի. ՄԱՐՏԻՐՅԱՆ

(Բ. լսարանի ուսանող, սարկավագ)

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

«Եկայք շինեցուք սուրբ զխորանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Քանդակեցին պապերն իմ կամարներն այս հիասքանչ,
Որպես կոթող հավատքի, հայրենական սրբություն,
Որպես խորհուրդ վեհիմաստ, ստեղծագործ, աննահանջ
Եվ գալիքի լույս հավատք՝ անքակտելի, հաստատուն...

Էջմիածինը կանգնեց հայ պետության կողքն ի վեր,
Հայրենիքին զերդ նեցուկ, բարեպաշտին որպես հույս,
Դպրության ջահը վառեց ժողովրդիս կարեւոր,
Եվ խավարի դեմ կանգնեց որպես անմար, պայծառ լույս:

Արյունահեղ մարտերում երբ ծեծվեց ազգն իմ դժբախտ,
Երբ հորդաններն խուժեցին ամեն կողմից Հայաստան,
Եղավ վշտի ամոքիչ, նա միշտ մնաց անվհատ,
Եվ միշտ նայեց հավատքով դեպի լուսն ապագան...

Եվ վերջապես երկիրն իմ սովետական աստղի տակ
Ոսկեցնցուղ շողերով պայծառացավ անթափսիծ,
Իրջանկությունը հորվեց մեր հարկերում անխորտակ,
Ժողովուրդն իմ տառնապած գտավ կյանքն իր բերկրալից:

Էջմիածին... անունն այդ հավատքի շողն է պայծառ,
Սիրտը շենշող հայության, լույսի փառոս շողշողում:
Նաղաղության աղալնի, որ ճախրում է անդադար,
Հայրենիքի սուրբ հավատք, համբուրելի սրբություն...: